# ԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՏՐՈՆԻՄԻԱՆ

Պրոֆ. Մ. Օ. ԿՈՍՎԵՆ (Մոսկվա)

*Պատրոնիմիա ենք անվանել նահապետական-տոհմային կարգերին հատուկ և դասակարգային հասարակարգում գյուղական բնակչության մեջ մասամբ պահպանված հնադույն հասարակական ձևը։ Այդ ձևը մի մեծ նահապետական ընտանիքի բաժանման հետևանքով կազմված և միմյանց միջև տնտեսական, հասարակական ու կաղափարական միասնությունը տարբեր չափերով պահպանած ազգակից մեծ կամ փոքր ընտանիքների խումբ է։*

*Պատրոնիմիան մենք առաջին անգամ հայտնաբերել ենք 1931 թ., ազգագրական նյութերով, մասնավորապես Հարավային Օսեթիայում մեր կատարած դաշտային դիտումների ժամանակ։ Զանազան նյութերի հիման վրա նկարագրել և բնութագրել ենք պատրոնիմիան մեր մի շարք աշխատություններում, գրքերում, հոդվածներում ու զեկույցումներում։ Այդ ընթացքում մեզ հետևել են մի շարք ազգագրագետներ ու պատմաբաններ, որոնք իրենց հերթին պատրոնիմիան երևան են հանել, նկարագրել և ուսումնասիրել տարբեր ժողովուրդների մեջ, տարբեր առումներով։ Կովկասի ժողովուրդների վերաբերյալ այդ արել են Ա. Ավդալը՝ քրդերի, Ս. Ս. Աղաշիրինովան՝ լեզգիների, Վ. Վ. Բարդավելիձեն՝ խևսուրների, Հ. Ա. Գուլիևը՝ ադրբեջանցիների և Ադրբեջանի թաթերի, Շ. Դ. Ինալ-Իպան՝ արխաղների, Մ. Մ. Իխիլովը՝ լեռնական հրեաների, Լ. Ի. Լավրովը՝ արաղաների ու լակերի, Ռ. Լ. Խարաձեն՝ վրացիների, Հ. Օ. Խաչաևը՝ Դաղստանի որոշ ժողովուրդների, Բ. Ա. Կալոևը՝ հյուսիս-օսերի և ագուլների, Է. Տ. Կարապետյանը և Վ. Հ. Բդոյանը՝ հայերի, Է. Լ. Կոջեսաուն՝ ադիգների, Լ. Ն. Կուժելևան՝ նոգայների, Մ. Ա. Կուրգուզովը՝ լեզգիների, Ս. Շ. Հաջիևան՝ կումիկների, Մ. Օ. Մակիտովը՝ բալկարների, Զ. Ա. Նիկոլսկայան՝ ավարների, Ա. Ի. Պերշիցը՝ կաբարդիների, Ի. Մ. Սաիդովը՝ չեչենների ու ինգուշների, Զ. Ն. Վանևը՝ հարավ-օսերի նկատմամբ։ Ներկա ակնարկում տալիս ենք կովկասյան պատրոնիմիայի ընդհանուր բնութագրությունը, հիմնվելով մեր կողմից կամ գրական աղբյուրներից հավաքած նյութերի և, առավել մեծ չափով, վերոհիշյալ ուսումնասիրողների հավաքած նյութերի վրա։*

*Պատրոնիմիան Կովկասի տարբեր ժողովուրդների մեջ ունի յուրահատուկ, ընդ որում բազմազան անվանումներ։ Այդպիսիք են օսական, նաև քարթվելական՝ «մի կրակից (օջախից) հեռացածներ», խևսուրական՝ «մի կրակից ելածներ», ադիգական՝ «մի կրակից բաժանվածներ», կումիկական՝ «մի օջախից դուրս եկածներ», արխաղական՝ «միմյանց միջև բաժանված տուն», չեչենական՝ «մի տաս մարդիկ» և այլ նկարագրական արտահայտությունները։*

*Պատրոնիմիայի այդպիսի նկարագրական բնութագրման այլ կարգ են կազմում օսական ֆիդի ֆիտի-ն («հոր զավակներ»), ադիգական «մի տան եղբայրներ»-ը, արխաղական արիպատա-ն («հոր որդիներ»), իմերեթական*

բարուշվիլորա-ն («մի պապից սերվածներ»), վրացական ղանակրերի-ն («բաժանված եղբայրներ»). սվանական սամխուր-ը կամ լամխուր-ը («եղբայրություն»), լեզգիական միրեսար-ը՝ մուրբվալ միրեսար (մերձավոր ազգականներ՝ եղբայրների և հորեղբոր որդիների զավակներ) և յարղրալ միրեսար (ավելի հեռավոր ազգականներ) տարբերակումներով։

Դրան զուգահեռ, Կովկասի որոշ ժողովուրդներ պատրոնիմիան նշում են առանձնահատուկ տերմինով. քրդերը՝ բաբ, հայերը՝ ազգ, ադիգները՝ խաբլ, կաբարդիները՝ լոեպլ, լակերը՝ ուսուրսու (այդ բոլոր տերմինների ստուգաբանական նշանակությունը ճշգրտորեն չի հաստատված)։

Վերջապես, Կովկասի մի շարք ժողովուրդներ պատրոնիմիան նշելու համար օգտագործում են այլալեզու (իրանական, արաբական, թուրքական, մոնղոլական) շատ տերմիններ, որոնք համապատասխան լեզուներում նշանակում են առհասարակ ազգակցական խումբ կամ, իր կարգին, հատկապես պատրոնիմիա։

Ինչպես գիտենք, պատրոնիմիայի յուրահատուկ գիծն այն է, որ նա կազմվում է մի մեծ ընտանիքի տրոհմամբ կամ բաժանմամբ։ Պատրոնիմիայի հենց նման ծագումն են ուղղակիորեն ցույց տալիս վերոհիշյալ անվանումներից մի քանիսը, ինչպես՝ «մի կրակից հեռացածներ», «մի տան եղբայրներ» և այլն։ Կովկասի ժողովուրդների պատրոնիմիան կազմվել է մեծ կամ փոքր, կամ էլ միաժամանակ թե՛ մեկ և թե՛ մյուս ընտանիքներից։ Բալկարների պատրոնիմիան դեռևս ոչ վաղ անցյալում կազմված է եղել մեծ և փոքր ընտանիքներից, բայց ետնագույն շրջանում մեծ ընտանիքներ այլևս չէին հանդիպում։ Մի պատրոնիմիայում ընտանիքների թիվը կարող է լինել երեք-հինգից մինչև մի քանի տասնյակ։ Պատրոնիմիա կազմվելու և նրա ընդլայնման արտահայտիչ օրինակ է բերում Է. Տ. Կարապետյանը[1], նկարագրելով մի հայ «ազգի» ճյուղագրությունը XVIII դարի սկզբից մինչև օրս։ Ընտանեկան համայնքը և պատրոնիմիան, ինչպես վկայում է Վ. Վ. Բարդավելիձեն, իսկուրները հստակորեն սահմանազատում են որոշակի տերմիններով։

Կովկասյան նյութով լավ է հետազոտվում բուն պատրոնիմիայի ընդլայնման և ճյուղավորման ընթացքը։ Պատրոնիմիայի մեջ մտնող առանձին ընտանիքները բազմանում, աճում են, տրոհվում կամ բաժանվում և որպես հետևանք. իրենց հերթին սկիզբ դնում պատրոնիմիաների։ Այդպիսով, տվյալ պատրոնիմիայի կազմում առաջանում են նոր, մատղաշ պատրոնիմիաներ։ Այս պատրոնիմիաները, որպես ընդհանուր կանոն, պահպանելով իրենց միասնությունը, ապրում են համահավաք, միաժամանակ էլ, օգնելով միմյանց, չեն կտրվում հին պատրոնիմիաներից։ Լոկ ավելի ուշ ժամանակներում, և այն՝ դիպվածորեն, հատկապես սակավահողության աճմամբ, նորելուկ պատրոնիմիաները անջատվում են և վերարնակվում ազատ տեղերում, այդուհանդերձ չկորցնելով կապը իրենց տոհմակիցների հետ։ Արդյունքը այն է, որ մենք Կովկասում ունենք տարբեր չափի ու տարբեր կազմի պատրոնիմիաներ՝ փոքր և մեծ, նույնպես կազմված մի քանի պատրոնիմիաներից։ Այսպես, ավարների մեջ մենք գտնում ենք ազգակից ընտանիքների ոչ մեծ խումբ, որն ան-

---

1 Է. Տ. Կարապետյան, Տոհմային հարաբերությունների մի քանի վերապրուկներ Հայերի մեջ։ Զեկուցում, կարդացված հնագետների ու ազգագրագետների Համամիութենական գիտական սեսիայում (Մոսկվա, 1962 թ. ապրիլ)։

վանվում է ցո ռուֆալուլ ղաղամսլ («մի տան մարդիկ»), և ավելի ընդարձակ ազգակցական խումբ՝ ՚ԻԲԻլ, «արմատ» (որը երբեմն նշվում է նաև իրանական բոխում («սերմ») տերմինով)։ Հայերի մեջ զանազանվում են՝ մեծ պատրոնիմիան՝ ազգ, սրա կազմում մտնում են փոքր խմբավորումներ, որոնք կոչվում են բաբուն կամ բիրա, իսկ ամենափոքր պատրոնիմիան բիձոնք են («հորեղբայրների խումբ»)։ Աբխազների մեջ զանազանվում են աբիպարա-ն («հոր որդիներ») և ավելի լայն ազգակցական շրջանակը՝ աժվլա-ն («սերմ»)։ Կումիկները զանազանում են թուխումի կամ պատրոնիմիայի երկու տեսակ՝ յուվուկ-բուխումը («մերձավոր թուխում»)՝ մերձավոր ազգակիցների խումբ, և յիրակ-բուխումը («հեռավոր թուխում»)՝ հեռավոր ազգակիցների խումբ։ Իր մեջ ավելի փոքր պատրոնիմիաներ ընդգրկող ընդարձակ պատրոնիմիայի ձևը կարելի է կոչել երկրորդ կարգի պատրոնիմիա։

Պատրոնիմիայի բուն ծագումն իսկ մի ընտանիքի բաժանքից պայմանավորում է այն, որ պատրոնիմիան սկզբունքորեն տեղափակված է։ Պատրոնիմիան Կովկասում անցյալում սովորաբար զբաղեցրել է առանձին գյուղ։ Հարավային Օսեթիայում հեռավոր անցյալում յուրաքանչյուր պատրոնիմիա ապրել է մեկուսացած, կազմելով մի գյուղ՝ Ֆաու։ Նման «համագերդաստան» բնակավայրերը տեղ-տեղ, հատկապես լեռնային շրջաններում, պահպանվել են մինչև այժմ։ Ադրբեջանում ներկայումս էլ կան առանձին փոքր գյուղակներ՝ 20—40 ծխանոց, որոնք բնակեցված են բացառապես ազգակիցներով։ Կովկասում մեծ պատրոնիմիան երբեմն ապրել է մի քանի ոչ մեծ կից գյուղերում կամ գյուղակներում։ Վերջապես, ավելի ուշ ժամանակներում, պատրոնիմիան մեծ մասամբ գյուղում զբաղեցրել է առանձին թաղ։ Ոչ մեծ պատրոնիմիկ գյուղը անցյալում ըստ երևույթին եղել է Կովկասի ժողովուրդների բնակավորման հիմնական տեսակը։

Պատրոնիմիկ թաղերը, այսինքն՝ մի պատրոնիմիայով կամ առհասարակ ազգակիցներով բնակված թաղերը, Կովկասի որոշ ժողովուրդների մեջ շատ կայուն են պահպանվել։ Այդպիսի թաղը Կովկասի տարբեր ժողովուրդներ կոչել են բոխում, ավուլ, խաբլ, մեհլե (մեհելե) և այլն։ Կարաչայների ամեն մի թաղում, օրինակ, դեռևս XX դարի սկզբին, ըստ ընդհանուր կանոնի, բնակեցված է եղել միայն մեկ «գերդաստան», որի անվամբ էլ նա կոչվել է[1]։ Նույնը սովորական երևույթ է եղել նաև Դաղստանում։ Վրաստանի ազգագրությունը. ըստ տարբեր շրջանների, մի մեծ ընտանիքի բաժանքի հետևանքով գոյացած թաղերի շատ օրինակներ է տալիս, ըստ որում թաղը պահպանել է նախասկզբնական ընտանիքի անվանումը։

Մյուս կողմից՝ թաղերը հաճախ բաղկացած էին միմյանց ազգակից ոչ մեծ պատրոնիմիաներից։ Այսպես, Ադրբեջանում, Ղուբայի շրջանում, թաթերի Դարա Զիչի գյուղում մինչև օրս պահպանվել է, ութ թաղ (մեհելե), որոնք ընդգրկում են 32 բայֆա կամ էվլադ և կրում են պատրոնիմիկ անվանումներ՝ Աղասի, Ջաֆարլի, Սաքերլի, Մոլլալի, Օսման-էվլադի և այլն։ Իրանալեզու Լահիճ գյուղում նույնպես պահպանվել է ութ թաղ, որոնցից յուրաքանչյուրում կա չորսից-հինգ ընտանիքից կազմված ընդհանուր ազգանուն կրող մինչև 10—15 պատրոնիմիա։ Այդ գյուղում եղել է ութ մզկիթ և մեկ ընդհանուր՝ «ջու-

---

[1] И. О. Щукин, Материалы для изучения карачаевцев, «Русский антропологический журнал», 1913, 1/2.

մա-մեչետ»։ Ամեն թաղ ունեցել է իր սեփական գերեզմանոցը, այդ դերեզմանոցում ամեն պատրոնիմիա՝ իր տեղը։ Ամեն թաղ ունեցել է իր աղբյուրը կամ ջրհորը և իր ընդհանուր «սուրբը»։

Ժամանակի ընթացքում թաղերը կորցրել են իրենց բացառապես պատրոնիմիկ բնույթը, և տվյալ թաղում երևան են եկել մեկ կամ մի քանի տարբեր պատրոնիմիաներ։ Նման դեպքերում նրանք հանդես են բերել զարմանալի կայունություն՝ պահպանելով իրենց ինքնամփոփությունը և տեղափակվածությունը։ Պատրոնիմիայի առանձնահատկություններից մեկը առանձին տեղի, հրապարակի առկայությունն է՝ ընդհանուր գործերի քննարկման և վճռման համար։ Այսպես, յոթ թաղից կազմված լեզգիական Կուրախ գյուղում պատրոնիմիայի ինքնամփոփությունը հստակորեն դրսևորվում է նրանով, որ հինգ թաղում, որոնցից ամեն մեկը մի պատրոնիմիա է ղրաղեցրել, համապատասխանորեն կար նշված բնույթի հինգ հրապարակ, իսկ մյուս երկու թաղում, որոնցում ապրում էր չորս թոխում, կար չորս թոխումային հրապարակ և, դրանցից բացի, ևս երկու համաթաղային։ Դոյություն է ունեցել նաև ամբողջ գյուղի հատուկ հրապարակը։ Ընդհանուր առմամբ Կուրախ գյուղում եղել է տասներկու հրապարակ[4]։ Պատրոնիմիայի այդ առանձին հրապարակները մի գյուղում, մասամբ՝ ընդհանուր թաղերում ապրող պատրոնիմիաների պահպանված ինքնամփոփության հատկանշական ցուցանիշներն են։ Եթե խախտված է պատրոնիմիայի տեղափակվածության միասնությունը գյուղում, ինչպես այդ նկատվում է Հայաստանի լեռնային վայրերում, և մի աղգի ընտանիքները այս կամ այն չափով ցրված են ապրում, ապա սար գնալիս, ամառային արոտավայրերում, բոլոր աղգակից ընտանիքները ղարմանալիորեն համատեղ են քոչում և իրենց տնակները սարքում են կողք-կողքի։

Կովկասի որոշ ժողովուրդների, հատկապես Դաղստանի ժողովուրդների մեջ հստակորեն դիտելի է այն պրոցեսը, ըստ որի մի պատրոնիմիայից բաղկացած մի քանի մանր գյուղակները միանալով դարձել են մի գյուղ, որտեղ ամեն մի պատրոնիմիա դրավել է առանձին թաղ։ Նման միացման պատճառները ժողովրդական ավանդություններում սովորաբար բացատրվում են պաշտպանական նկատառումներով, սակայն այդ բացատրությունը բավարար չէ։

Թաղի կապը պատրոնիմիայի հետ դրսևորվում է նրանով, որ երբեմն նույն տերմինը նշանակում է և՛ պատրոնիմիա, և՛ թաղ։ Այսպես, աղիգական խարբը նշանակում է աղգակցական խումբ՝ պատրոնիմիա, ոչ մեծ գյուղ, գյուղակ և միաժամանակ՝ «թաղ»։ Դաղստանում հաճախ թոխում տերմինով նշել են թե՛ պատրոնիմիան, թե՛ թաղը։ Այդ տերմինը ունենալով աղգակցական խմբի արմատական իմաստ և նշանակելով պատրոնիմիա, ծառայել է «թաղ», ինչպես և «գյուղ» (նոդայների, կումիկների, ավարների և ուրիշների մոտ) նշանակող տերմին։ Մյուս կողմից, թաղերը հաճախ կրել, և մինչև այժմ էլ կրում են իրենց նահապետի կամ հիմնադրի անվամբ կազմված աղգակցական պատրոնիմիկ անվանումները, որոնք պահպանվել են այն բանից հետո էլ, երբ թաղերը կորցրել են իրենց զուտ աղգակցական բնույթը։ Հատկանշական է, որ

---

3 Աղբրեջանին վերաբերող տվյալները հիմնված են Հ. Ա. Գուլիևի անձնական հաղորդումների վրա։

4 С. С. Агаширинова, Поселения лезгин в XIX—начале XX вв., ձեռագիր՝ մեզ ուղարկված հեղինակի կողմից։ Հմմտ. Л. В. Панек, Жилище лезгин, «Материалы по этнографии Грузии», IX, Тбилиси, 1957.

Դաղստանում գյուղը անցյալում հաճախ բաղկացած է եղել զույգ թվով պատրոնիմիա-թաղերից (դրա վերապրուկները երբեմն այժմ էլ պահպանվում են)։

Լակերի յուրաքանչյուր գյուղում սովորաբար եղել է չորս թաղ։ Կումիկական Ակսաե գյուղում եղել է ութ թաղ կամ առանձին «աուլ»։ Ավարական Զոխ աուլը, ըստ ավանդության, կազմվել է 12 փոքր գյուղից և ունեցել է 12 թոխում։ Այդ գյուղը բաժանված է եղել երկու մասի՝ «վերին աուլ», կազմված երեք ավալից՝ թաղից, և «ներքին աուլ», կազմված երեք ավալից։ Ավարական Անդի գյուղը բաղկացած է եղել երեք հստակորեն զանազանվող մասից՝ «վերին ավալից», «ներքին ավալից» և «վրացական ավալից», կազմված գյուղում բնակեցված գերի վրացիներից։ Այսպիսով, սկզբնապես այդ գյուղն ունեցել է երկու թաղ։ Դա հաստատվում է նրանով, որ հնում գյուղում եղել է երկու աշտարակ։ Ավարական Ջարի գյուղը (Հյուսիսային Ադրբեջանում) այժմ էլ բաղկանում է յոթ-ութ թաղից, յուրաքանչյուրը կազմված մի քանի թոխումից[5]։ Ավարցի-բագուլալների Քվանդա գյուղը առաջացել է չորս գյուղակից, որոնցից յուրաքանչյուրում բնակվել է մի ազգակցական խումբ (դիսյ), և ունեցել է չորս թաղ. դրանք կրել են նույն անվանումները, ինչպիսիք ունեցել են նախասկզբնական չորս գյուղակում ապրող ազգակցական խմբերը։ Ավարցի-բեժետների Թլյալալ գյուղը բաղկացել է երկու ավալից՝ «վերին» և «ներքին», ըստ որում նրանցից յուրաքանչյուրում եղել է երեք թաղ-պատրոնիմիա։ Ավարցի-կարատների Կարատա գյուղը կազմվել է չորս գյուղակից, որոնցից յուրաքանչյուրում ապրել է մեկ ազգակցական խումբ[6]։ Ինչպես մենք տեսանք, աղքրբեջանական Դարա Չիչի և Լահիճ գյուղերից յուրաքանչյուրը մինչև օրս էլ բաղկացած է ութ թաղից։

Այսպիսով, կովկասյան որոշ գյուղեր երևան են հանում անցած կամ դեռևս ինչ-որ չափով պահպանվող բաժանումը երկու մասի, որոնցից ամեն մեկը բաղկացած է երկու կամ առհասարակ զույգ թվով թաղ-պատրոնիմիաներից։ Գյուղի նման կառուցվածքը հիմք է տալիս այստեղ տեսնելու հնագույն դուալ բաժանման մնացուկ[7]։ Նկատենք, որ նկարագրված երևույթը ամենից հաճախ դիտվում է միայն քայքայված վիճակում, որը միանգամայն բնական է նման խիստ հնագույն ձևի համար։

Երբ պատրոնիմիան գրավել է մի թաղ կամ առհասարակ տեղափակված է եղել, առանձին ընտանիքների տները հաճախ սերտորեն հպվել են մեկը մյուսին, այնպես որ պատրոնիմիայի բոլոր տները կազմել են միասնական ճարտարապետական կոմպլեքս։ Բալկարների մոտ, օրինակ, 8—12 ընտանիքից բաղկացած մի պատրոնիմիայի բնակարանները տեղադրված են եղել կոմպակտ կերպով, մեկը մյուսի մոտ, ըստ որում բոլորը, կամ գրեթե բոլորը, եղել են մի կտուրի տակ։ Նման բնակելի կոմպլեքսներում հարևան տների պատերը (բալկարների, քրդերի, հայերի և այլոց) ունեցել են հատուկ քառակուսի անցքեր, լուսապատուհանի նման (հայերն այն կոչում են ակնատ), որոնք պատրոնիմիայի ընտանիքների միջև կապ պահպանելուն են ծառայել։ Այդ անց-

5 Հ. Ա. Գուլիևի անձնական հաղորդումը։

6 Բագուլալներին, բեժետներին և կարատներին վերաբերող տեղեկությունները վերցնում ենք հանգուցյալ Ե. Մ. Շիլինգի ձեռագիր նյութերից, որոնք պահվում են Մոսկվայի ՍՍՌՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտի արխիվում։

7 Տե՛ս «Дуальная организация» ակնարկը մեր «Этнография и история Кавказа. Исследования и материалы» (М., 1961) գրքում, էջ 26—32։

քերը... «խոսում են անմիջական հարևանների միջև անցյալում գոյություն ունեցած սերտ տնտեսական և, ամենայն հավանականությամբ, նաև ազգակցական կապերի մասին»[8]։ Ադիգների, արխազների, ավարների և կովկասյան մյուս ժողովուրդների մեջ նույն նպատակին են ծառայել մի պատրոնիմիայի բակերի միջև եղած հատուկ սողանցքները։ Նման պատրոնիմիկ թաղի ամբողջական պատկերացում է տալիս մոխիններին վերաբերող նյութը, ուր նշված սողանցքը արտահայտվում է քարի տերմինով[9]։

Պատրոնիմիայի հիմնական գիծը նրա տնտեսական միասնությունն է։ Անցյալում, որքանով հնարավոր եղավ պարզել, հողը եղել է պատրոնիմիայի կոլեկտիվ սեփականություն։ Ավարների մեջ հողը մանր պատրոնիմիաներին բաժանելիս, մի հողամաս մնացել է ավելի ընդարձակ պատրոնիմիայի՝ քրի-քիլ-ի տիրության ներքո։ Մի ժամանակ հողի մշակումը ևս կատարվել է կոլեկտիվ կերպով՝ ամբողջ քրիքիլով։ Ավարների, ինչպես նաև Կովկասի շատ ուրիշ ժողովուրդների մեջ, կոլեկտիվ արտադրության վերապրուկները կապմել են շատ տարածված զանազան գյուղատնտեսական սովորույթներ. օրինակ, գյուղատնտեսական բոլոր աշխատանքները՝ դանքը, հերկը, բերքահավաքը, խոտհունձը բոլոր ազգակիցները սկսում էին միևնույն օրը։ Որտեղ արհեստական ոռոգում է եղել, այնտեղ պատրոնիմիկ մեծ խմբերը հանդիսացել են ջրամատակարարման և ջրօգտագործման կազմակերպիչներ, ըստ որում յուրաքանչյուր պատրոնիմիա ջրից օգտվել է հերթականությամբ։

Պատրոնիմիաներին հատկացված հողը մերթ ընդ մերթ վերաբաժանվել է։ Այսպես, կարարդիններին մեջ ամբողջ հողը բաժանված է եղել ըստ խաբլ-երի, սակայն 10—15 տարին մի անգամ վերաբաժանվել է։

Երբ պատրոնիմիաները կազմել են գյուղի առանձին թաղերը, մշակվող ամբողջ հողի տերը եղել է գյուղը կամ գյուղական համայնքը, իսկ թաղ-պատրոնիմիաները ստացել են հողանդակներ (надель), որոնք պարբերաբար վերաբաժանվել են։ Պատրոնիմիաների ընտանիքների տնամերձ հողամասերը վաղուց ի վեր կազմել են ամեն մի ընտանիքի առանձին սեփականություն։ Ժամանակի ընթացքում հողի կոլեկտիվ տիրապետումը պատրոնիմիայի շրջանակներում սկսել է բայքայվել։ Դա, սակայն, սկզբում վերաբերել է միայն վարելահողին։ Այն սկսել է բաժանվել ըստ ընտանիքների կամ «տների» նույնպես պարբերաբար վերաբաժանվելով։ Ադիգների մեջ վարելահողերը հնում գտնվել են ընդհանուր առմամբ պատրոնիմիայի անբաժան տիրության ներքո, բերքը մտել է ընդհանուր շտեմարանը և ապա բաժանվել ընտանիքներին։ Բերքի որոշ բաժին հանդիսացել է պատրոնիմիայի անձեռնմխելի սեփականություն և ծախսվել է միայն ամբողջ պատրոնիմիայի կարիքի կամ նրա ընտանիքներից մեկի աղքատանալու դեպքում։ Ժամանակի ընթացքում ադիգների մոտ վարելահողը սկսել է բաժանվել ըստ ընտանիքների։ Ինչպես ասվեց, հողը, մասնավորապես վարելահողը տոհմի շրջանակներում վերաբաժանման է ենթարկվել ըստ պատրոնիմիաների, սակայն պատրոնիմիաների ներսում ըստ ընտանիքների վերաբաժանումները կատարվել են ավելի հաճախ։

---

[8] С. Д. Лисициан, Из материалов по изучению жилищ Армении, I. Крестьянское жилище Мегринского района, «Известия Кавказского историко-археологического института», Тифлис, 1927, VI.

[9] Р. Харадзе, Грузинская семейная община, Тбилиси, 1961, հատ. II, էջ 60—62։

Ավելի ուշ, քան վարելահողերը, սկսել են ըստ ընտանիքների բաժանման ենթարկվել համապատրոնիմիական հողի մյուս տեսակները՝ խոտհարքները, արոտները և սակավ արդյունավետ օգտագործվող հանդերը։ Նշված պրոցեսը բավական հստակորեն է դրսևորվում Հարավ-Օսեթիայի անցյալում։

Արտը Հարավ-Օսեթիայում վաղուց արդեն բաժանված է եղել ընտանիքների միջև։ Մի պատրոնիմիայի ընտանիքներին պատկանող հողակտորները սովորաբար առկից են եղել, այնպես որ տվյալ ամբողջ պատրոնիմիայի ընտանիքների արտերը մի հողամաս են կազմել՝ ամբողջ վարելահողի երբեմնի պատրոնիմիկ ընդհանրության պարզ վերապրուկ։ Որոշ վայրերում դեռևս XIX դ. վարելահողը մշակվում էր կոլեկտիվ կերպով՝ ամբողջ պատրոնիմիայի կողմից, իսկ բերքը բաժանվում էր ըստ ընտանիքների՝ գրանցում եղած շնչերի թվի հաշվով։

Ինչ վերաբերում է խոտհարքներին, ապա վաղ անցյալում դրանք բոլորը կամ գտնվել են գյուղի (երբեմն ազգակից գյուղերի խմբի) տիրության ու օգտագործման ներքո (այսինքն, հավանաբար, ամբողջ տոհմի տիրության և օգտագործման ներքո), կամ բաժանված են եղել ըստ պատրոնիմիաների։ Ավելի ուշ ժամանակներում խոտհարքների տիրությունը և օգտագործումը ունեցել է եռակի ձև։ Անմիջապես գյուղի տերիտորիային հարող խոտհարքները բաժանված են եղել ըստ ընտանիքների, ավելի հեռավորները՝ ըստ պատրոնիմիաների, իսկ ամենահեռավոր հողամասերը թողնվել են ամբողջ գյուղի կոլեկտիվ օգտագործմանը։ Այս վերջին հողամասերը նույնպես ունեն իրենց պատմությունը։ Ավելի վաղ ժամանակներում խոտն այստեղ հնձել ու հավաքել են ամբողջ գյուղով, իսկ բաժանել՝ ըստ պատրոնիմիաների։ Ավելի ուշ ժամանակներում պատրոնիմիաները, կամ ընտանիքները, խոտը հնձել և հավաքել են հերթով, ամեն մեկն իր համար, ըստ որում արվել է հավաքած խոտի հավասարեցման հաշիվ։ Ինչ վերաբերում է պատրոնիմիաներին բաժանած հողամասերին, ապա այստեղ կամ կոլեկտիվորեն հնձել են և խոտը բաժանել ըստ ընտանիքների, կամ ամեն մի ընտանիք հնձել է ինչքան իրեն պետք է եղել, կամ էլ, վերջապես, մի տարի հնձել է տվյալ պատրոնիմիայի մի ընտանիքը, հաջորդ տարին՝ մեկ ուրիշը և այլն։ Նոր ժամանակներում խոտհարքների այդ հողամասերը ևս սկսել են բաժանել ոչ թե ըստ պատրոնիմիաների, այլ ըստ ընտանիքների։

Վերջապես, արոտավայրերը, որպես ընդհանուր կանոն, մինչև վերջին ժամանակները թողնվում էին ամբողջ գյուղի, հաճախ ազգակից գյուղերի խմբի, կոլեկտիվ օգտագործմանը։ Ետնագույն երևույթ է արոտավայրերի բաժանումը ըստ պատրոնիմիաների, և բացառություն (որը յուրահատուկ էր հարուստ տնտեսությանը)՝ արոտավայրը ծխի տիրության ներքո գտնվելը։

Պատրոնիմիայի կոլեկտիվ սեփականություն է հանդիսացել տնային անասունը։ Դրա վերապրուկն է համարվում այն, որ ավարների մեջ, օրինակ, երբ արդեն անասունը անձնական, ավելի ճիշտ՝ ընտանեկան սեփականություն էր, առանձին տներում անասունների համար հատուկ շենքեր չեն եղել, պատրոնիմիայի բոլոր անասունները պահվել են գյուղի ծայրին գտնվող ընդհանուր գոմերում։ Քրդերի մեջ ամբողջ պատրոնիմիան, կամ պատրոնիմիայի մի քանի տուն, ունեցել են ընդհանուր հոտ և պահել ընդհանուր հովիվներ, ըստ որում համատեղ էլ վերամշակել են կաթը։

Անասունի կոլեկտիվ սեփականության գոյության մեկ այլ վկայություն է պատրոնիմիկ խարանը։ Նոդայների ամեն մի թայփա-պատրոնիմիա ունեցել է իր խարանը, ըստ որում ամբողջ տոհմը ունեցել է այնքան խարան, որքան պատրոնիմիա է եղել նրանում։

Ամբողջ պատրոնիմիայի ընդհանուր սեփականությունն են կազմել նաև մրգատու այգիները և տվյալ պատրոնիմիային պատկանող ամեն ոք կարող էր ընդհանուր այգուց միրգ վերցնել։ Պատրոնիմիայի ընդհանուր տիրության և օգտագործման ներքո են գտնվել ջրաղացը, հացահատիկ շորացնելու և հաց թխելու վառարանը և այլն։ Ագիդների այդպիսի վառարանը շինել են պատրոնիմիայի կանայք, կոլեկտիվ կերպով, ընտանիքներից մեկի տնամերձում, և այդ վառարանից հետագայում օգտվել են տվյալ պատրոնիմիայի բոլոր ընտանիքները։

Պատրոնիմիայի կոլեկտիվ սեփականության տարրերը, Մ. Օ. Մակիտովի նկարագրության համաձայն, բալկարների մեջ դեռ վերջերս էլ կենդանի են եղել։ Մի պատրոնիմիայի ընտանիքները օգտվել են ընդհանուր բանող անասունից և գյուղատնտեսական գույքից, ըստ որում միմյանցից վերցրել են այն ամենը, ինչ հարկավոր է եղել։

Պատրոնիմիայի երբեմնի կոլեկտիվ սեփականության վերապրուկ կարելի է համարել այն կարգը, ըստ որի կարարդիների մեջ թույլատրված է եղել Կարիքի դեպքում, առանց հարցնելու, երամակից առժամանակ վերցնել իր պատրոնիմիայի անդամի նժույգը։

Պատրոնիմիայի տնտեսական միասնության արտահայտություն է եղել փոխօգնությունը տվյալ պատրոնիմիայի ընտանիքների միջև։ Այդ գիծը առանձնապես կայուն կերպով է պահպանվել Կովկասի բոլոր ժողովուրդների կենցաղում նույնիսկ այն ժամանակ, երբ պատրոնիմիան արդեն խոր քայքայում է ապրել։ Փոխօգնությունը արտահայտվել է նրանով, որ պատրոնիմիայի բոլոր ընտանիքները անպայմանորեն օգնության էին գալիս այն ժամանակ, երբ ընտանիքներից մեկը ձեռնարկում էր որևէ աշխատանք, որի կատարման համար մի ընտանիքի ուժը բավական չէր, օրինակ՝ տուն շինելը կամ վերանորոգելը, խոշոր ծախսերում՝ հարսանիք, թաղում ու հոգեհաց և այլն։ Փոխօգնությունը տարածվում էր նաև ավելի լայն ազգակցական խմբի վրա. բայց այն դեպքում, երբ հեռավոր ազգակիցները օգնում էին ըստ ցանկության, պատրոնիմիայի անդամների օգնությունը պարտադիր էր կամ կատարվում էր առաջին հերթին։

Ավելի ուշ ժամանակներում, դրամական հարաբերությունները կենցաղ թափանցելու հետ. պատրոնիմիայի փոխօգնությունը տեղի է ունեցել դրամական դժվարությունների դեպքում։

Զափազանց ուշագրավ ցուցում ենք գտնում Մ. Օ. Մակիտովի նշումներում։ Բալկարների պատրոնիմիաներում գոյություն է ունեցել աշխատանքի յուրօրինակ բաժանում՝ տվյալ պատրոնիմիայի որոշ ընտանիքներ ոչխար են արածացրել, մյուսները՝ կով, ըստ որում հենց նրանք էլ կթել են կովերը և վերամշակել կաթը, երրորդ ընտանիքները կատարել են գյուղատնտեսական այլ աշխատանքներ՝ վար, հունձ, վառելիքի պատրաստում և տեղափոխում, բնակելի շենքերի նորոգում և այլն։ Պատրոնիմիայի ավագ ընտանիքը և նրա գլխավորը զբաղվել են գյուղատնտեսական մթերքների վաճառքով և այն ամենի ձեռք բերմամբ, ինչը չէր բավարարում պատրոնիմիային։ Այսպիսով, պատ-

ռոնիմիայի գլխավորը ոչ միայն օժտված էր հասարակական որոշ իշխանությամբ, այլև պատրոնիմիայի հաշվին զբաղվելով առ ու ծախով, իր ձեռքում էր պահում նրա ամբողջ տնտեսությունը. նրա ընտանիքը աստիճանարար մյուսներից հարստանում էր, մինչդեռ հովիվների, նախրապանների և այլոց ընտանիքները աղքատանում էին։ Նկարագրած կարգերը, հետևարար, բալկանական պատրոնիմիայի միջավայրում հանդիսանում էին գույքային անհավասարության առաջացման սկզբնաղբյուրներից մեկը։

Կովկասյան պատրոնիմիայի մասին այժմ գոյություն ունեցող ողջ գրականության մեջ բոլորովին չլուսաբանված են մնում պատրոնիմիայի քայքայման վիճակին առանձնապես ներհատուկ իրավաբանական ինստիտուտների և նորմերի, մասնավորապես՝ հողի կարգավորման մի քանի նորմերի, ժառանգական իրավունքի առանձին դրույթների, նախընտրելի գնման ու տոհմային փրկագնման իրավունքների և այլ հարցեր։

Միայն Է. Տ. Կարապետյանն է հաղորդում[10], որ իր կողմից ուսումնասիրված վայրի (Նոյեմբերյանի շրջան) հայերի մոտ պատրոնիմիայի շահագործվող հողը թեև բաժանված էր ըստ ընտանիքների և գտնվում էր նրանց ժառանգական տիրության ներքո, այն շարունակում էր համարվել ամբողջ պատրոնիմիայի՝ ազգի ընդհանուր սեփականություն։ Առանձին ընտանիքները իրավունք չունեին վաճառելու իրենց հողաբաժինները՝ առանց ամբողջ ազգի համաձայնության։ Հողի վաճառքը առանց այդպիսի համաձայնության կարող էր վիճարկվել ազգի ամեն մի անդամի կողմից։ Եթե որևէ ընտանիք մահանում էր, ապա նրան պատկանող հողաբաժինը անցնում էր մերձավոր ազգակից ընտանիքներին, որոնք այդ հողը հավասար բաժին էին անում միմյանց միջև։

Պատրոնիմիայի հասարակական միասնությունը։ Պատրոնիմիաները լինում էին տարբեր չափերի, բայց այն որքան բազմամարդ, նույնքան ուժեղ էր լինում ինչպես տնտեսական, նույնպես և հասարակական տեսակետից։ Պատրոնիմիան ունենում էր իր վարչությունը, որի մարմիններն էին՝ պատրոնիմիայի ընդհանուր ժողովը, պատրոնիմիայի խորհուրդը և ամբողջ պատրոնիմիան գլխավորող ավագը։ Ընդհանուր ժողովի համար գյուղում, եթե այն եղել է «միագերդաստան», կամ թաղում գոյություն է ունեցել հատուկ տեղ։ Ժողովների այդպիսի հատուկ տեղերը կամ այդպիսի հրապարակները Կովկասի մի շարք ժողովուրդների մեջ պահպանվել էին մինչև վերջին ժամանակներս։

Պատրոնիմիայի խորհուրդը բաղկացած էր առանձին ընտանիքների գլխավորներից։ Ամբողջ պատրոնիմիայի գլխավորը սովորաբար եղել է պատրոնիմիայի ավագ ընտանիքի ավագը։ Կաբարդիների պատրոնիմիայի ավագը՝ նահիժը, եղել է շատ հարգված և հեղինակավոր դեմք, որի հետ անհրաժեշտ էր խորհրդակցել տվյալ պատրոնիմիայի ընտանիքների կյանքի բոլոր կարևոր հարցերում։ Նա էլ դատավոր է հանդիսացել առանձին ընտանիքների միջև ծագած վեճերում։ Նրան չանսալու համար ազգականները մեղավորին կարող էին ծեծել կամ նույնիսկ դուրս հանել գյուղից։ Երբ ագիդների որևէ ընտանիքում եղ, կով կամ ոչխար էին մորթում, ապա գլուխը (որը համարվում էր կենդանու ամենից «պատվավոր» մասը) ուղարկում էին պատրոնիմիայի ավագին։ Նրա մոտ էր հավաքվում պատրոնիմիայի խորհուրդը, եթե այն (ինչ-

10 Տե՛ս Է. Տ. Կարապետյանի վերոհիշյալ զեկուցումը։

պես ադիգների մեջ) տեղի չէր ունենում տվյալ պատրոնիմիայի սուրբ ծառի մոտ։ Ճիշտ այդպես էլ բալկարների մեջ պատրոնիմիայի բոլոր կարևորագույն ընդհանուր գործերը քննարկվում և վճռվում էին պատրոնիմիայի ամենից ավագ և ազդեցիկ դեմքի տանը, նրա անմիջական ղեկավարությամբ։

Պատրոնիմիայում մեծ հեղինակություն էր վայելում նաև ավագի կինը։ Հարավ-օսերի մոտ պատրոնիմիայի ավագ կինը՝ ֆիստեր-ուսը խաղում էր ոչ փոքր տնտեսական և հասարակական դեր։ Շափսուղների պատրոնիմիայի ավագ կինը կոչվել է բրսրմ դուաշշն, «տան իշխանուհի»։ Խորհրդի համար նրան են դիմել պատրոնիմիայի բոլոր կանայք, պատրոնիմիայի ամեն ընտանիքում նա է եղել գլխավոր տնտեսուհի-կառավարչուհին՝ հարսանիքի, թաղման, հոգեհացի և այլնի ժամանակ։

Կառավարման վերը նկարագրված մի շարք մարմինները և տարրերը գոյություն են ունեցել նաև ավելի լայն ազգակցական խմբում, քան պատրոնիմիան է, սակայն թույլ արտահայտված և սակավ գործուն են եղել։

Պատրոնիմիայի հասարակական միասնությամբ է որոշվել զանազան ձևերով ու առնչություններում արտահայտված նրա համերաշխությունը։ Հեռավոր անցյալում առաջին հերթին և գերազանցապես հենց պատրոնիմիային է պատկանել վրիժառության իրավունքը ինչպես ներգործական, նույնպես և կրավորական առումներով։ Այլ կերպ ասած, պատրոնիմիայի բոլոր անդամները պարտավոր են եղել վրիժառու լինել նրա անդամներից մեկին հասցրած վիրավորանքի համար և առանց տարբերության պատրոնիմիայի բոլոր անդամների վրա է ընկել որևէ օտարականի՝ նրա անդամներից մեկի կողմից հասցրած վիրավորանքի վրեժը։ Համապատասխանորեն կարգավորվել են հարաբերությունները քրեական տուգանքը հատուցելիս կամ ստանալիս։ Նոգայների մեջ տվյալ թայփա-պատրոնիմիայի անդամի սպանության համար պարտադիր կարգով վրիժառու պետք է լիներ այդ նույն թայփայից որևէ մեկը և միայն այն դեպքում, երբ այդ թայփայից ոչ ոք չէր կարող վրեժը հանել, վրիժառության պարտականությունը անցնում էր համապատասխան տոհմի անդամներին։ Ընդհանուր առմամբ, Կովկասի տարբեր ժողովուրդների մեջ տարբեր ժամանակներում վրեժի սահմանները, ներգործական և կրավորական իմաստներով, տարբեր են եղել, տարածվելով մինչև ամբողջ տոհմի ընդարձակ սահմանները և սահմանափակվելով ընտանիքի շրջանակներում, բայց պատրոնիմիան այն միջավայրն է եղել, ուր վրիժառությունը մնացել է առավել ներգործուն և կայուն։

Պատրոնիմիայի կյանքում մեծ նշանակություն է ունեցել ավագությունը։ Այնպես, ինչպես տոհմում հատուկ նշանակություն է տրվել ավագ պատրոնիմիային, բուն պատրոնիմիայում աչքի է ընկել ավագ ընտանիքը, ըստ որում այդ ընտանիքի ավագը իր դիրքով ամբողջ պատրոնիմիայի ավագն է եղել։ Տվյալ հասարակության մեջ նախնադարյան-համայնական հարաբերությունների քայքայման և դասակարգային կարգերի տարրերի ներթափանցման հետ, նշված ավագությունը միանում է հարստությանը և դասակարգային բնույթ ստանում։

Տոհմային տարամուսնության հետ (էքսոգամ) միաժամանակ տարամուսնական է և պատրոնիմիան։ Կովկասի որոշ ժողովուրդների, մասնավորապես Դաղստանի ժողովուրդների մեջ, պատրոնիմիան ընդամուսնական (էն-

դոդամ) է եղել։ Տվյալ երևույթը վատ է նկարագրված և բոլորովին ուսումնասիրված չէ։

Վերջապես, պատրոնիմիայի հասարակական էությունը դրսևորվել է նաև նրանում, որ այն կազմել է համատոհմային և համաժողովրդական աշխարհազորի զինվորական միավորը։ Այդ պատրոնիմիկ զինվորական ստորաբաժանումները ուրիխները կոչել են «առանձին կրակ», ունեցել են տասից հարյուր մարդ և գլխավորվել են առանձին պետերով։ Կովկասի այն վայրերում, որտեղ գոյություն են ունեցել ռազմական աշտարակներ, դրանք հաճախ պատկանել են հենց պատրոնիմիային, այնպես որ յուրաքանչյուր պատրոնիմիա ունեցել է իր աշտարակը և գյուղում եղել է նույնքան աշտարակ, որքան պատրոնիմիա։ Ինչպես հիշվեց, պատրոնիմիայի շինությունները, ամրոցությամբ վերցված, ճարտարապետական առումով կազմել են միասնական կոմպլեքս և որոշ լեռնային վայրերում, մասնավորապես Լեռնային Դաղստանում, այդ կոմպլեքսը իրենից ներկայացրել է ամրոցի մի տեսակ։ Պատրոնիմիայի տների միջև եղած ներքին անցքերը և անցումները, որոնք խաղաղ ժամանակ տնտեսական հաղորդակցման միջոց էին, ռազմական վտանգի դեպքում ծառայել են պատրոնիմիայի ընդհանուր ռազմական աշտարակը անցնելուն։ Լեզգիների ազգակցական տները հաճախ միացած են եղել ստորին հարկերի ներքին անցքերով, որն օգնել է համախմբմանը՝ թշնամու հարձակման դեպքում։ Քրդերի պատրոնիմիայի տները սահմանապատող պատերում եղել են հատուկ խորշեր, որտեղ պահվել է ընդհանուր զենքը։

Պատրոնիմիայի գաղափարախոսական միասնությունը նախ և առաջ արտահայտվել է նրանով, որ յուրաքանչյուր պատրոնիմիա ունեցել է իր հատուկ անվանումը։ Այն կազմվել է տվյալ պատրոնիմիայի նախահոր անձնանունից, պատրոնիմիկ նախածանցի համակցմամբ, որի սկզբնական նշանակությունը, ըստ ընդհանուր կանոնի, եղել է «երեխաներ» կամ «որդիներ»։

Ը տարբերություն տոհմի միշտ առասպելական նախահոր, պատրոնիմիայի նախահայրը լիովին ռեալ և իրական է եղել։ Դա եղել է տվյալ պատրոնիմիային սկիզբ դնող այն անձը, որի մասին պահպանվել է սերնդից-սերունդ անցնող հիշողությունը։ Երբ առաջանում էր նոր պատրոնիմիա, նա իր ծագումն արդեն սկսում էր նոր նախահորից։

Օսերի պատրոնիմիկ վերջավորությունը եղել է ֆիրբա-ն, կրճատված ձևով՝ բա։ Այդպիսով, տվյալ պատրոնիմիայի անունը եղել է, օրինակ, Թուդան-թա կամ Սանաքո-թա։ Արխազների պատրոնիմիկ վերջածանցը եղել է պա-ն կամ իպա-ն, ադիգներինը՝ կո-ն և այլն։ Հենց այդպիսի պատրոնիմիկ վերջածանցներ են վրացական ՝ՀՀ-ն. ձե-ն, հայկական յան-ը կամ յանց-ը և այլն։ Այդ պատրոնիմիկ անվանումները դարձել են ավելի ընդարձակ տոհմային խմբերի անուններ, իսկ հետագայում վերածվել են արդի իմաստով ազգանվան։ Կովկասյան որոշ ժողովուրդների մեջ մարդը միաժամանակ անվանվել է իր պատրոնիմիկ և տոհմական անուններով։ Այսպես, շափսուղների մեջ, օրինակ, Զելեզիկոն եղել է տվյալ անձի պատրոնիմիկ անունը, Աչմիզը՝ նրա տոհմական անունը։ Խեվսուրների մեջ համապատասխան անուններ են եղել, օրինակ, Փիցքելաուրին և Արաբուլին։ Հարավ-Օսեթիայում տվյալ անձը իր պատրոնիմիկ պատկանելությամբ եղել է, օրինակ, Սարխալթա, իսկ տոհմանունով՝ Փլի-թա։ Ագիգների մեջ մի տոհմի անդամները միմյանց կոչել են

ունեկոշ, «տան եղբայր», մի պատրոնիմիայի անդամները՝ ունեկոշ բլալ, «տան մերձավոր եղբայր»։

Կարևոր է նշել, որ ընտանիքը, մասնավորապես մեծ ընտանիքը, չի ունեցել որևէ հատուկ անուն։ Մեծ ընտանիքի անդամները ընդհանուր առմամբ և նրանցից յուրաքանչյուրն առանձնապես, անձնանունից բացի, սկզբնապես հավանարար ոչ մի կերպ չեն կոչվել և միայն հետագայում առաջացել է ամբողջ ընտանիքի անվանումը հոր կամ պապի անունով, իսկ ավելի ուշ՝ անհատական հայրանունը, որ Կովկասի մի շարք ժողովուրդների մեջ մինչև վերջին ժամանակներս գոյություն չի ունեցել։

Պատրոնիմիայի անդամների դաղափարախոսական կապը, այնուհետև, արտահայտվել է նրանց մասնակցությամբ իրենց պատրոնիմիաների առանձին ընտանիքների կյանքին։ Այդ մասնակցությունը տեղի է ունեցել առանձնապես այնպիսի իրադարձություններում, ինչպիսիք են ծնունդը, հարսանիքը և թաղումը։ Ընդհանրապես բոլոր այդպիսի դեպքերում, հասարակական տարբերություններին համանման, պատրոնիմիայի անդամները հանդես էին գալիս որպես ավելի մերձավոր որոշակի խմբի ազգակիցներ, որոնք ավելի պարտադիր իրավունքներ ու պարտականություններ ունեին, քան հեռավորները։

Պատրոնիմիան սերտորեն կապված է եղել նաև պաշտամունքային ընդհանրությամբ։ Նա ունեցել է իր ընդհանուր սրբատեղին կամ երկրպագության վայրն ու առարկաները, հավաքվել է ընդհանուր ծիսական արարողությունների, ուր տվյալ պատրոնիմիայի ոչ-անդամները մուտք գործել չէին կարող և այլն։ Պատրոնիմիան ունեցել է կամ իր առանձին գերեզմանոցը, կամ առանձին տեղամասը համագյուղական գերեզմանոցում։ Հայերի յուրաքանչյուր պատրոնիմիկ գերեզմանոցում գտնվել է տվյալ պատրոնիմիայի սուրբ ծառը։ Որոշ ժողովուրդների մեջ տապանաքարերի վրա պատկերվում էր մեռածի պատրոնիմիայի խարանը։

Պատրոնիմիայի դաղափարախոսական, մասնավորապես պաշտամունքային ընդհանրության խնդրում մեծ դեր է խաղացել նրա ավագ կինը։

Կովկասի տարբեր ժողովուրդների մեջ առանձին պատրոնիմիաներ աչքի էին ընկնում և հռչակված էին հատուկ ընդունակություններով կամ շնորհքներով՝ որպես իրենց տոհմի պատմության կիտակներ, տոհմային ավանդությունների պահպանողներ, բանահյուսության ստեղծողներ և կատարողներ, այս կամ այն գործիքով հմուտ նվագողներ և այլն։

Հենց նրանց միջոցով էլ սերնդից-սերունդ, դարից-դար էին փոխանցվում բանավոր ավանդությունները, հետագայում աղբյուր ու հիմք հանդիսանալով ժողովուրդների գրավոր պատմության համար։

## ПАТРОНИМИЯ У НАРОДОВ КАВКАЗА

Проф. М. О. КОСВЕН (Москва)

(Резюме)

Патронимией мы назвали архаическую общественную форму, свойственную патриархально-родовому строю и отчасти сохраняющуюся среди сельского населения в классовом обществе. Форма эта представляет собой группу родственных семей, больших или малых, образовавшихся вследствие сегментации или разделения одной большой патриархальной семьи и сохраняющих между собой в различных отношениях хозяйственное, общественное и идеологическое единство.

Патронимия народов Кавказа состояла из либо больших, либо малых, либо тех и других одновременно, семей. На кавказском материале хорошо прослеживается процесс разрастания и разветвления самой патронимии. Отдельные семьи, входившие в патронимию, размножались, разрастались, сегментировались или делились и в результате в свою очередь давали начало патронимиям. Вновь образовавшиеся патронимии по общему правилу жили, сохраняя свое единство, компактно, вместе с тем и не отделялись от старых патронимий, помогая одна другой и пр. Лишь в более поздние времена, и то эпизодически, в особенности с ростом малоземелья, молодые патронимии отделялись и переселялись на свободные места, не теряя все же связи со своими родичами. В результате мы имеем на Кавказе патронимии различного размера и различного состава: меньшие и большие, состоящие сами из нескольких патронимий. Эти патронимии входят, как это иногда более или менее определенно рисуется конкретным материалом, в еще более широкую родственную группу. Такую группу можно бы, говоря теоретически, называть родом. Патронимия принципиально всегда локализована, и она на Кавказе в прошлом обычно занимала отдельное селение или квартал в селении.

*Основную черту патронимии составляет ее хозяйственное единство.* У народов Кавказа в прошлом земля, видимо, находилась в коллективной собственности патронимии. Некогда и обработка земли производилась коллективно всей патронимией. Со временем коллективное владение землей в пределах патронимии стало распадаться, что сначала коснулось только пахотной земли. Значительно позже стали подвергаться разделу по семьям другие виды земли общепатронимического фонда.

В коллективной собственности патронимии находились домашний скот, фруктовые сады, мельницы, печь для сушки зерна и выпечки хлеба и пр. Экономическое единство патронимии выражалось во взаимопомощи между семьями данной патронимии, что стойко сохранялось в быту всех народов Кавказа даже тогда, когда патронимия испытала уже глубокий распад.

*Общественное единство патронимии,*— занимала ли она отдельное селение или отдельный квартал,— имело в прошлом весьма реальное выражение и определяло ее солидарность, выражавшуюся в различных формах.

и отношениях. Наряду с родовой экзогамией экзогамна и патронимия, но у некоторых народов Кавказа (в частности, у народов Дагестана) патронимия была эндогамна. Наконец общественная сущность патронимии выражалась в том, что она составляла воинскую единицу общеродового и общенародного ополчения.

*Идеологическое единство патронимии* имело своим выражением прежде всего то, что каждая патронимия обладала своим особым наименованием и, в отличие от предка рода, всегда легендарного, предок патронимии был вполне реальным и действительным. Идеологическая связь членов патронимии выражалась также в их участии в жизни отдельных семей своей патронимии. Патронимия была теснейшим образом связана и с культовой общностью.